ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2024 թ. N 336-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 19.12.2024 թ. N 01/11.2/8134-2024 գրությունը՝ ***որոշում եմ***՝

1. 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ, հունվարի 1-ից մինչև 17-ը ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր կարգի տնտեսություններում անասունների համատարած հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծել համայնքային հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Խաչատրյան - համայնքի ղեկավարի տեղակալ
հանձնաժողովի քարտուղար՝ Վաղինակ Մանուկյան-աշխատակազմի գլխավոր մասնագետ
անդամներ՝ Արտակ Բագրատյան -Կեչուտ գյուղի վարչական ղեկավար
Սևակ Մկրտչյան- Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար
Մանուկ Մանուկյան - Կեչուտ գյուղի անասնաբույժ
Այվազ Բարսեղյան - Գնդեվազ գյուղի անասնաբույժ
Տիգրան Ղուկասյան-աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ
Մեսրոպ Հարությունյան- աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

2.Հանձնաժողովին՝ անասնագլխաքանակի հաշվառումը և արդյունքների ամփոփումը կատարել սահմանված ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. դեկտեմբերի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2024 թ. N 337-Ա

ԷԴԻԿ (ԷԴՈՒԱՐԴ) ԱՇՈՏԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչ Արմեն Էդիկի Սիմոնյանի դիմումը (մտից՝ N 2113, 24.12.2024 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի 7-րդ փողոցի 17-րդ շենքում գտնվող բնակարանը, նախկինում տրված հասցեն՝ ք. Կեչուտ-2փ., համար 27 շենքի, թիվ 1 բնակարան, վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, 7-րդ փողոց 17–րդ շենք N 4:

3. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. դեկտեմբերի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2024 թ. N 338-Ա

ԱՐՏԱԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Արտակ Մկրտչյանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 19-ի դիմում-հայտը՝ (մտից N 2062, 19.12.2024 թ.)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 4-րդ փողոցի 1-ին փակուղու N 3 հասցեում գտնվող հողամասի վրա բնակելի տան կառուցման համար նախագծա–նախահաշվային փատաթղթերի մշակման նպատակով Ջերմուկ քաղաքի բնակիչ Արտակ Կոստանի Մկրտչյանին տալ նախագծման թույլտվություն:

2. Արտակ Մկրտչյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. դեկտեմբերի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի 2024 թ. N 339-Ա

ԱՐՏԱԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր և տեղական վճարների արտոնություններ սահմանելու մասին» N 98-Ն որոշման, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Արտակ Մկրտչյանի դիմումը (մտից՝ N 2134, 27.12.2024 թ.) ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Արտակ Կոստանի Մկրտչյանին տալ Գնդեվազ գյուղի 4-րդ փողոցի 1-ին փակուղու N 3 հասցեում գտնվող հողամասի վրա բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն:

2. Արտակ Կոստանի Մկրտչյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք, ինչպես նաև համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 18000(տասնութ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Կոստանի Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. դեկտեմբերի 30
Ջերմուկ